ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2020թ. թիվ 620-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-Ի
N 333-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հաշվի առնելով «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատարի 21.08.2020թ. թիվ 20-239 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. մայիսի 8-ի ««Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 333-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Հավելվածի «Կլինիկական հետազոտություններ» բաժնի «48. Ֆունկցիոնալ հետազոտություններ» մասի՝

1) 48.16-րդ տողում «9000» թիվը փոխարինել «10000» թվով,

2) 48.17-րդ տողում «9000» թիվը փոխարինել «15000» թվով:

2. Հավելվածի «Կլինիկական հետազոտություններ» բաժնի «48. Ֆունկցիոնալ հետազոտություններ» մասը լրացնել նոր՝ 48.24 և 48.25 տողերով՝

48.24	Էզոֆագոգաստրոդուոդենոսկոպիա՝ ընդհանուր անզգայացմամբ	1 հետազոտություն	20000
48.25	Կոլոնոսկոպիա՝ ընդհանուր անզգայացմամբ	1 հետազոտություն	25000

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր